«Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամը (Այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է 2022 թվականի ապրիլի 25-ին, Գյումրի քաղաքում տեղի ունեցած Հիմնադիրների (Կարինե Ղազարյանի, Ագնեսա Ավետիսյանի, Հասմիկ Զաքարյանի) Հիմնադիր ԹԻՎ 1 ժողովի որոշմամբ, ՀՀ Արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում է ստացել՝ 2022 թվականի մայիսի 25-ին (Գրանցման համար՝ 222. 160. 1239990), Հիմնադրամի նպատականերն են՝ Պետական և ոչ պետական ոլորտում քաղաքացիների սպասարկումն իրականացնող աշխատակիցների և հանրային ծառայողների մասնագիտական դասընթացների անցկացումը, Հիմնադրամի շահառուների մասնագիտական կրթության և հետագա մասնագիտական զարգացմանը խթանելը:

Հիմնադրամի խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքի հայաշատ համայնքներում նվիրատուներ, նվիրաբերողներ ներգրավվելուն ուղղված միջոցառումների կազմակերպումը և անցկացումը, կրթական, մարզամշակութային կյանքի աշխուժացմանը և տարածմանը, կրթական և մասնագիտական հմտությունների զարգացմանը նպաստող ծրագրերի մշակումը և իրականացումը, կազմակերպչական, կրթական, բարեգործական, քարոզչական և այլ ծրագրերի մշակումը և իրականացումը:

Հիմնադրամի նպատականերն են՝ Պետական և ոչ պետական ոլորտում քաղաքացիների սպասարկումն իրականացնող աշխատակիցների և հանրային ծառայողների մասնագիտական դասընթացների անցկացումը, Հիմնադրամի շահառուների մասնագիտական կրթության և հետագա մասնագիտական զարգացմանը խթանելը, Ոստիկանության ծառայողների էթիկական նորմերի պահպանմանը հետևելը և այլն:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը ակտիվ համագործակցում է ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության, Փրկարար և Միգրացիայի ու քաղաքացիության ծառայությունների, Ֆինանսների նախարարության , ՀՀ ԱԱԾ ԳՈՒԿ-ի և այլ պետական և ոչ պետական կառույցների հետ:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը գործունեության ընթացքում, ղեկավար Մկրտիչ Ավետիսյանի ֆինանսավորմամբ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Պարեկային ծառայության համար 2022 թվականից պարբերաբար կազմակերպել և իրականացրել է «Սթրեսակայունություն», «Հաղորդակցություն» , «Կառավարում» և «Հակաահաբեկչություն. վերապատրաստում՝ վերապատրաստողների համար» թեմաներով վերապատրաստման ծրագրեր( ՑԱՅԳ ՀՌՀ՝ https://www.facebook.com/TSAYGITV/videos/1692174737847137 , 1-02 անդրադարձ՝ https://goo.by/glOvcJ ) , 2025 թվականին ՀՀ ՆԳՆ հետ համատեղ իրականացվել է Բարեվարքության մակարդակի բարձրացման վերաբերյալ վերապատրաստումներ՝ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության, ՄՔԾ և ՓԾ համար (ՆԳՆ անդրադարձը՝ https://youtu.be/1xxPBALPrxM?si=6WXPnAN1YYZBc-Xd ),

2025 թվականին Հիմնադրամը կազմակերպել է Բարեվարքության, Սթրեսակայունության և Հանրային հաղորդակցության վերաբերյալ դասընթացներ ( https://mia.gov.am/wp-content/uploads/2025/03/2c6438e31bed5d131c49d55e141abaf02afffe33c37bf4cadfd1e1da5bf8f479.pdf )

Կարևորելով շարունակական կրթության կարևորությունը պետականաշինության գործում պարեկային 8 ծառայողների տրվել է ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

2023 թվականին «ՈՔՎԿ» ԻՀԿ նախաձեռնությամբ, «Ռազմավարությունների ազգային կենտրոն» Հիմնադրամի, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության և Շիրակի մազպետարանի հետ համատեղ Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող դպրոցներում անցակցնում է «Պայքար բուլլինգի դեմ. խոցելի խմբերի իրազեկվածություն և պաշտպանություն» թեմայով հանդիպում-քննարկումներ:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Շտաբի հրավերով մասնակցում է նաև «Ոստիկանական գվարդիայի մասին» նոր օրենքի մշակման և այլ հարակից իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթի կլոր սեղան-քննարկումներին:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը գործուն համագործակցում է ՀՀ ՆԳՆ ՆԱՀՎ, ինչպես նաև ՆԳՆ Ոստիկանության ՊԾ Մոնիթորինգի և վերլուծության բաժնի հետ, իրականացնելով Ծառայության մշտադիտարկում և ծառայողների կողմից թույլ տված խախտումների արձանագրում և բարձրաձայնում:

«Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը, նաև բացառիկ համագործակցությամբ ՀՀ ԱԱԾ-ի հետ, 2023թվականի դեկտեմբեր ամսին կազմակերպել է «Հակաահաբեկչություն» թեմայով վերապատրաստում ՀՀ ԱԱԾ Գիտաուսումնական կենտրոնում:

2025 թվականին, Ոստիկանության օրվա առթիվ կարևորելով ոստիկանություն-քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցությունը, անվտանգության ապահովման, հանցավորության կանխարգելման և բացահայտման գործում ոստիկանության դերը՝ ՆԳ նախարարության, Պարեկային ծառայության, ՀՈԳՎ և ՔՈԳՎ Երևան քաղաքի և մարզային ստորաբաժանումների 33 ծառայողներ, պարգևատրվեցին շնորհակալագրերով և մեդալներով, անդրադարձը հետևյալ հղումով՝ https://www.police.am/news/view/item_33100425.html

Հիմնադրամի կողմից հրապարակվել է նաև երկու զեկույց ՆԳՆ Պարեկային ծառայության վերաբերյալ: Զեկույցներին հնարավոր է ծանոթանալ հետևյալ հղումներով՝ https://www.ncsarmenia.am/zekuycvoqktexnika.pdf, https://www.ncsarmenia.am/zekowyc_oqvk.pdf

Հիմնադրամի գործունեության այլ մանրամասները պարբերաբար ներկայացվում են հիմնադրամի պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում՝ www.ncsarmenia.am , FB: NCS Armenia